№ 73 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 13

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 13 № 73

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Ապրիլի 5-ին, Մաղաւուզ գիւղում, երկարատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց Զրաբերդի նախկին գործակալ ծերունի

ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԸ,

որի մասին հանգուցեալի այրին, երիցուհի Հռիփսիմէ Տէր-Սարգսեան Տէր-Գրիգորեանը, որդիքը՝ Սարգիս քահանայ, Զալալ, Զումշուդ և Միքայէլ Տէր-Գրիգորեանները և դուստրը—Զադա Շամամեանը խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին, բարեկամներին և ծանօթներին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կամաւորների խմբերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հասարակական հարցեր. Նամակ Անապայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

Հեռագրական գործակալութիւնները հաղորդեցին մի քանի տեղեկութիւններ Եալու գետի շրջանում կատարվող ընդհարումների մասին։ Այդ տեղեկութիւնների մէջ խօսվում է ոչ զօրագնդերի առաջխաղացութեան և ճակատամարտների, այլ կամաւորների ընդհարումների մասին։ Օրինակ պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնել էր, որ ռուս կամաւորների խմբերը մի քանի անգամ փորձել են անցնել Եալուն և վնասել թշնամիներին Ըչժուի և Իօնամպօի մօտերում։

Մեր ընթերցողների համար հետաքրքրական է իմանալ, թէ ովքեր են այդ կամաւորները և ինչպէս են կազմվում նրանց խմբերը կամ վաշտերը։

Օգտվելով այն տեղեկութիւններից, որ տալիս են մայրաքաղաքի թերթերը, մենք կարող ենք յայտնել, որ կամաւորներին վերապահված է ոչ աննշան դեր պատերազմական գործողութիւնների ընթացքում։ Նրանք նման չեն այն կամաւորներին, որոնք մինչև այդ զինւոր չեն եղել և անծանօթ են պատերազմական գործերին։ Ոչ։ Նրանք կամաւորներ են զօրքի միջից, ստանձնում են իրանց բարեհաճ կամքով բարդ և ծանր յանձնարարութիւններ, այն է՝ կատարել խուզարկուների և նախայարձակների դեր թշնամու վրա։ Առհասարակ մի զօրագնդից կամաւորներ դուրս են գալիս մօտ հարիւր անձ, նրանք մշտական անհանգստութիւն են պատճառում թշնամուն իրանց թէև ոչ մեծ, բայց յաճախակի և անսպասելի յարձակումներով։ Նրանք թշնամուն պահում են մշտապէս լարված և յուզված դրութեան մէջ և խանգարում են նրան կենտրօնացնելու իր ոյժերը։ Կամաւորները երևալով այս ու այն կողմերում, ուսումնասիրում են տեղերը և թշնամու զօրքերի զանազան մասերի դասաւորութիւնը։ Նրանք շատ անգամ և առաջնորդներ են լինում զօրագնդերի շարժման միջոցին դէպի ճակատամարտ։

Կամաւորները ազատ են կացուցանվում բանակի մէջ սահմանված մի քանի պարտաւորական գործերից, բայց դրա փոխարէն նրանք պէտք է պատրաստ լինեն թէ ցերեկվայ և թէ գիշերվայ ամեն մի ժամին արշաւանքի դիմելու։

Թէ Կրիմի, թէ Կովկասեան պատերազմների և թէ ռուս թիւրքական պատերազմի ժամանակ կամաւորների վաշտերը կարևոր ծառայութիւններ կարողացան մատուցանել ռուսաց զօրքին։ Կարսի մօտ 1877 թ-ի աշնանը հոկտեմբերին կամաւորների խմբերը անհանգստացնում էին թիւրքական բերդապահ զօրքին ամեն գիշեր և նոյն իսկ նոյեմբերի լոյս 6-ի գիշերը թուրքերը ենթադրել էին թէ կամաւորներ են յարձակվողները, մինչդեռ սկված էր Կարսի իսկական պաշարումը։ Միջին Ասիայում 1880—81 թուերի պատերազմի միջոցին կամաւորների եռևից գնում էին ձիեր՝ բեռնաւորված պաշարեղէններով։ Այդ կամաւորները կատարեցին խուզարկուների և առաջապահների դեր։

Ներկայ պատերազմում ցամաքի առաջին ընդհարումների մեծագոյն մասը կատարվել է կամաւորների վաշտերի ձեռքով։ «Нов. Вр.» լրագրի ռազմագիտական գրողներից մէկը կարծում է, որ կամաւորների խմբերը ահագին օգուտ պէտք է բերեն, աչքի առաջ ունենալով մանաւանդ այն հանգամանքը, որ թշնամին շատ բան հիմնել է խորամանկութեան և ճարպիկութեան վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ամուսնական առողջութիւնը ժամանակակից հասարակութեան մէջ դարձել է մի այնպիսի հարց, որի վերաբերմամբ, կարծում ենք, այլ ևս անբաւական է սովորական «հրատապ» անունը։ Հասարակութիւնը այլասերվում է։ Այս ընդհանուր երևոյթը շօշափվում է ամեն տեղ—փոքրիկ, «նահապետական» գիւղում և խոշոր առևտրական-արդիւնաբերական կենտրոններում։ Այլասերումը ֆիզիկական է, բայց նրա հետ ձեռք ձեռքի տուած գնում է և բարոյականը։ Ի՞նչպէս ազատել մարդկութիւնը գալոց ընդհանուր խորտակումից։ Շատ միջոցներ են առաջարկվում, և այդ միջոցներից մէկն էլ այն է, որ առողջ մարդիկ ամուսնանան իրար հետ։ Եւ իրաւ, անտես անել այս կարևոր հարցը նշանակում է աչք փակել այն սոսկալի խորխորատի դիմաց, որ բացված է հասարակութեան ոտների տակ։ Համաշխարհային հարցերը արձագանք են գտնում և մեր մէջ. մեզանում էլ շատ գանգատներ են եղել, որ վարակված մարդիկ, ժառանգական հիւանդութիւններ ունեցողները անարգել ամուսնանում են, աւելացնելով վատառողջ, ֆիզիկապէս և մտաւորապէս այլանդակվող սերունդի թիւը։—Այդ պատճառով մեզանում էլ առաջարկվում էր ամուսնութիւնը թոյլ տալ կատարելապէս առողջ անհատների մէջ։ Հարցը, կարծէք, շատ հեշտ է լուծվում։ Բաւական է ներկայացնել բժշկական վկայական—և ամեն վտանգ անցած է. կարելի է սպասել, որ կը լինեն երջանիկ ամուսնութիւններ։ Այս մի և նոյն հարցը մենք այժմ արծարծված ենք տեսնում և Կ. Պոլսի հայ մամուլի մէջ։ Ահա ինչ է գրում «Սուրհանդակը».

Ամուսնական հրապարակը բաց է այսօր մեր ամենուս համար ալ անխտիր, առողջին եւ ախտաւորին հաւասարապէս։

Ասոր անմիջական հետեւանքը եղող ցաւալի արդիւնքը նկարագրել հոս, տխուր ու երկար ալ պիտի ըլլար։ Սերնդական ախտաւոր յաջորդականութիւնը մէկ կողմէն, ու ֆիզիքական քայքայում մ՝ուս կողմէն պիտի գային անաւոր կործանումը պատրաստել նրմանօրինակ ընտանեկան յարկի մը։

Քանիսնե՞ր կարելի է մատնանշել այդ կարգի դէպքերէն։ Բայց որպէս զի միանգամ ընդ միշտ վերջ մը տրուի բոլոր ատոնց, պատրիարքարանին կը մնայ պահանջել ամուսնական Թեկնածուներէն, որպէս զի իրենց հրամանին ստանալէ առաջ նախապէս բժշկական վկայագիր մը ներկայացնեն ի մասին իրենց տոկուն կազմութեան ու առողջութեան, հաստատելով, թէ իրենք ամեն կերպով զերծ են ո եւ է հիւանդութենէ։

Անգամ մը, որ այս դրութիւնը ընդունուի, տարակոյս չի մնար, որ ալ ամեն բան վերջ կը գտնէ ու մասամբ կը գտնուի նաեւ այն թշուառութիւնը, որու ծիրանները շատեր կան ինկած այսօր, մինչ իրենց անհեռատեսութեամբ։

Եւ պէտք է գիտնալ, որ հանրութիւնը պիտի՝ համակերպի. եւ արդեք մը չը պիտի յարուցանէ «Բժշկական վկայագրին» դէմ, որուն գործադրումէն ինք է, որ պիտի նպաստաւորուի ամեն կերպով։

Սկզբունքը, ինքն ըստ ինքեան, համակրելի է։ Հարց կարող է լինել միայն գործադրութեան մասին։ Յօդուածագիրը ի նկատի ունի միայն Կ. Պոլիսը։ Այդտեղ շատ են բժիշկները, այդտեղ ամուսնութիւնների թոյլտուութիւնը կենտրօնացած է մի հիմարկութեան—պատրիարքարանի մէջ։ Կարելի է ունենալ մի բժիշկ, որին կը դիմեն ամուսնանալ ցանկացողները։ Բայց աշխարհիս մէջ երջանիկ արկածներ շատ քիչ կան։ Մենք մոռանում ենք որ վարակիչ, այլասերող ախտերը աւելի հէշտաւոր կերպարանք ունեն հասարակ ժողովրդի մէջ, գիւղական աշխարհում, ուր բժիշկներ չեն լինում, իսկ ամուսնացնողը տգէտ տէրտէրն է։ Յայտնի է նոյնպէս, որ հոգևորականութիւնը սաստիկ աւանդապահ է, կաշկանդված հին կանոններով և նախապաշարմունքներով։ Կընդունէ՞ նա արդեօք նոր ժամանակի պահանջը, իր պաշտօնավարութեան վրա կաւելցնէ՞ արդեօք հասարակական առողջութեան վրա հսկողի պաշտօնը։ Հարցեր են սրանք, որոնք հեշտ և շուտ չեն վճռվի։ Մինչդեռ իրականութիւնը խիստ ու անողորմ է, նա չէ խնայում, նա չէ կանգնում, չէ սպասում։ Ի՞նչ անել։ Մեր կարծիքով, պէտք է պատրաստել գիտակից, հասկացող ծնողներ, պէտք է նրանց առաջ քաշել և նրանց վրա դնել այդ մեծ, կենսական հարցի լուծումը։ Իսկ դրա համար պէտք է հասկացնել նրանց իրերի դրութիւնը, հասկացնել ոչ թէ կիսատ-պռատ ակնարկներով, ոչ թէ վերացական խրատներով, այլ պարզ նկարելով նրանց առջև աղէտի ամբողջ պատկերը, ամբողջ սարսափելի դէմքը։ Ասացէք միշտ, մի՛ վախենաք կրկնութիւններից, տուէք պատկերներ, բերէք պատմութիւններ, համոզեցէք, որ զզուելի փարիսեցիութիւն է կեղծ, անհիմն ամօթխածութիւնը այնպիսի անհագին հարցի մէջ, որպիսին է հասարակութեան ապագան, հասարակութեան գոյութիւնը։ Եւ այն ժամանակ, հաւատացած ենք, առաջ կը գայ կատարեալ գիտակցութեամբ զինված մի շերջան, որ ինքը ձեռք կառնէ իր երեխաների առողջութեան հարցը, նա ինքը կը պահանջէ—նախ բժշկական վկայական, ապա համաձայնութիւն։ Օրէնսդրութիւնները միշտ յետ են մնում ժամանակի պահանջներից, միշտ գնում են հասարակութեան ետևից։ Հասարակութիւնն է պատրաստում նիւթ օրէնսդրութեան համար, նիւթ, որ պահանջում է առաջ գնալ, կերպարանափոխվել, յարմարվել կեանքի առաջնակարգ պահանջներին։ Ուրեմն, մեր հասարակութիւնն էլ դեռ պէտք է ինքը սկսէ բժշկական վկայականների տկզբունքը մտցնել կեանքի մէջ և ապա պահանջել, որ նա մտնէ և եկեղեցական օրէնքի մէջ, եթէ, ի հարկէ, այդպիսի օրէնքի անհրաժեշտութիւն լինի։ Ամենից առաջ և ամենից շատ մի բան.—պատրաստեցէք մարդկանց, հասկացրէք ախտաւոր ամուսնութիւնների ամբողջ սարսափը...

ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Գիւղը եւ քաղաքը

II

Առհասարակ մեզանում մի թիւր հասկացողութիւն է տարածված գիւղի վերաբերութեամբ։ Գիւղը բարոյապէս բարձր է, սուրբ, մաքուր, եթէ կուզէք՝ նոյն իսկ իդէալական։ Նրա բնակիչները միշտ պատկերացվում են միամիտ, շիտակ ու բարեխիղճ, թէև տգէտ ու կոպիտ։

Քաղաքը դրա միւս ծայրայեղութիւնն է։ Նա ընկած է, նա անբարոյական է։ Քաղաքում ամեն մարդ ընկած է ցած ու ստոր շահի ետևից։ Վաշխառուներ, նոյն իսկ մի-մի հրէշներ են քաղաքացիները։ Խորամանկութիւնն ու դաւաղրութիւնները, խարդաւանանք ու նենգութիւնը բուն են դրել նրանց սրտերում։

Ամեն անգամ, երբ խօսք է եղել գիւղացու և քաղաքացու մասին, հայ գրողը միշտ բբռնել է գիւղացու—«կրտսեր եղբօր» կողմը։ Գիւղացին ներկայացվել է միշտ զոհ, իսկ քաղաքացին դահիճ։ Դատարաններում, ոստիկանատներում, բոլոր պաշտօնական հաստատութիւններում քաղաքացին կաշառակեր կամ կաշառատու է ներկայացվել. այդ միջոցով նրան նկարագրել են ամենազօր... իսկ գիւղացին. ո՜, նա վիզը ծռած, միամիտ կանգնած է. նա չէ հասկանում, թէ ինչ է կատարվում...

Խօսելն անգամ աւելորդ է անառակութեան մասին... Գիւղացի կինը բարոյական է, անդրդվելի հաւատարմութիւնով լցված դէպի իր ամուսինը, իսկ քաղաքացի կինը անառակ է, միշտ տրամադիր դաւաճանելու և իր ամուսնուն, և՛ իր սիրածին։

Ասածներս լոկ խօսքեր չեն։ Հայ ազգատիկ գրականութիւնն ունի վէպեր, պատկերներ և, մանաւանդ, լրագրական բազմաթիւ յօդուածներ, որոնք կարող են ծառայել իբր ապացոյց մեր ասածների։

Գրական այդ ուղղութիւնը վաղուց է սկըսված մեզանում, բայց նրա վրա բաւական զօրեղ ազդեցութիւն է ունեցել՝ 70—80 թուականներից սկսած՝ և ռուս նարոդնիկութիւնը։ Ռուս նարոդնիկները նոյն տեսակ կարծիքի էին և այժմ էլ են ռուս մուժիկի մասին։

Գլէբ-Ուսպէնսկին, Զլատօվրատսկին և ուրիշ նարոդնիկները մեր 80-ական և 90-ական թուականների երիտասարդութեան ներշնչողներն ու աւտորիտէտներն էին։

Այդ նարոդնիկական ուղղութիւնը մեր հասարակական հարցերի քննութեան ժամանակ շատ բանի է խանգարել, շատ հարցերի որոշ գոյն է տուել։

Մեր կարծիքով, այդ հայացքը բաւական միակողմանի և կանխակալ է։

Գիւղացին նոյնքան բարոյական է և անբարոյական, որքան և քաղաքացին։ Ճշմարիտ է, նա ընութեան զաւակ է. նրա գործը աւելի ընութեան հետ է քան մարդկանց։ Նա պէտք է որ աւելի մաքուր լինէր, բայց նրա բարոյական աշխարհի միակ հիմքն է երկիւղը, դժոխքն ու դրախտը, Աստծու պատիժը։ Իսկ դա այնքան չափազանց փխրուն հիմք է, որ բաւական է դրախտի առաջին շունչը, նրա առաջին աւերիչ, քայքայիչ ազդեցութիւնը, և՝ գիւղացին անմիջապէս ընկնում է ստոր, շատ աւելի ստոր, քան այդ վիճակին ընկած ու արդէն անցկացած քաղաքացին։

Այո՛, զարհուրելի է գիւղացու ընկած տիպը։ Նա պոկվում է իր բարոյական նահապետական հիմքից և դեռ ձեռք չէ բերում նոր հիմքեր. «հեռանում է մի ափից, միւսին էլ դեռ չէ մօտենում»։

Իսկ կա՞ն արդեօք գիւղեր, որոնց կպած չը լինի «աղա կապիտալի» շունչը։ Գոնէ մեզանում այժմ այլ ևս չը կան։

Գիւղը մարդկանց փոքր համախմբութիւն է, քաղաքը՝ մեծ։ Այժմ երկու տեղում էլ տիրում է դրամի ոյժը։ Բնականաբար նրանք պէտք է ունենան և մի և նոյն ախտերը, մի և նոյն հասարակական բարոյական կերպարանքը։ Եւ որքան աւելի մուտ գործէ դրամը և կապիտալը գիւղերի խորքերը, այնքան աւելի պէտք է բարոյապէս ընկնի մթութեան մէջ խարխափող գիւղացին։

Եթէ որ և է բարոյական խնդիր աւելի թոյլ է քաղաքում, դրա փոխարէն պէտք է խոստովանվել, որ այնտեղ կան և ամբողջ կրթված շրջաններ, որոնց մէջ ամրացել է, կամ սկսել է ամրանալ բարոյական գիտակցութիւնը, բարոյական պարտականութեան հասկացողութիւնը։ Գիւղերի նոյն իսկ ամենաբարոյական դասը զուրկ է այդ գիտակցութիւնից։

Քաղաքացու բարոյական աշխարհն աճում, ամրապնդվում է, իսկ գիւղացունը նուազում, քայքայվում։ Քաղաքացին արդէն անցել է

քայքայման պերիոդից և մտել բարոյական վերաշինութեան պերիոդը, իսկ գիւղացու բարոյական մթնոլորտը դեռ տարրալուծվում, աւերվում է։

Քաղաքում սկսվել է կազմվել մի դասակարգ, որը գիտէ թէ ինչո՞ւ պէտք է բարոյական լինել և լինում է։ Իսկ գիւղում այդպիսի տարր չը կայ։

Գիւղը անցեալի հիմնարկութիւն է, քաղաքը՝ ապագայի։ Ապագայում քաղաքների թիւն անհամեմատ աւելի է լինելու, քան այժմ և եղած գիւղերն էլ աճելու, քաղաքի կերպարանք են ստանալու։

Մարդիկ պէտք է խոշոր ջանք գործ դնեն քաղաքը կանգնեցնելու ուղիղ ճանապարհի վրա. նրանց ոյժերի խոշոր մասն այդ կողմն է թեքված և այդպէս էլ պէտք է լինի։

Դրանով չենք ուզում ասել, որ գիւղը պէտք է արհամարհել, երեսի վրա թողնել։ Ո՞չ։ Նա կայ, այնտեղ էլ մարդիկ են ապրում, ուրեմն՝ պէտք է մտածել, աշխատել և նրա մասին։ Բայց երբէք չը պէտք է քարոզել, որ մարդիկ արհամարհեն քաղաքը և դիմեն դէպի իդեալը՝ դէպի գիւղը։

Ապագան քաղաքին է պատկանում և ոչ գիւղին։

—

Իրերի բնական զարգացումը, մարդկային հասարակութիւնների երկաթէ էվոլիւցիան քաղաքներին տուել է այնպիսի մտաւոր ու բարոյական կերպարանք, որ աւելի գրաւիչ, աւելի հմայիչ է, քան գիւղը։ Այդ մտաւոր ու բարոյական առաւելութիւնը ձգում է գիւղի առաջադէմ ուժերին, հմայում, քաշում է նրանց իր գիրկը և դրանով աւելի ևս աճեցնում քաղաքի ընդունակ ու գործունեայ տարրերի թիւը։ Դա մի անդիմադրելի բնական հոսանք է։

Բայց մտաւորի ու բարոյականի այդ ձգող ոյժը չափազանց նշչին, չափազանց ողորմելի է, համեմատելով տնտեսական ամենազօր ոյժի հետ։

Տնտեսութիւնն է այսօր այն հիմքը, որի վրա հաստատվում, ձևվում են մեր կեանքի բոլոր երևոյթները։ Նա է, որ թուլացնում է գիւղը, զօրացնում քաղաքը։ Նա է, որ ուղղութիւն է տալիս հասարակական բոլոր երևոյթներին։

Մենք մի երկու խօսք ասացինք մտաւորի և բարոյականի մասին, որպէս զի մեզ չը մեղադրեն մատերիալիստական միակողմանիութեան մէջ։

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ է ներկայացնում գիւղը և ի՞նչ քաղաքը տնտեսական տեսակէտից։

Խաժակ

ՆԱՄԱԿ ԱՆԱՊԱՏԻՑ

—

Մարտի 25-ին

Մենք արդէն խօսել ենք մեր նախկին յօդուածներում, որ Սև ծովի ափերին հաստատվել են անցեալ տարի վերջին քառամեակում բաւական թիւով թրքահայեր, որոնցից ստուար մեծամասնութիւնը պարապում է երկրագործութեամբ, գլխաւորապէս ծխախոտի արդիւնաբերութեամբ։ Այժմ ուզում ենք երկու խօսք էլ ասել այն դաղթականների վերաբերութեամբ, որոնք տասնեակ տարիներ առաջ ընդունելով ռուսահպատակութիւն՝ կազմել են Սև ծովի ափերում առանձին գիւղական համայնքներ։ Դրանց թիւմն են և՝ Ծեպելդա գիւղը Սուխումի շրջանում ու Մծարայ գիւղը Գուդաուտի գաւառում։

Ծեպելդացիները՝ չը նայած որ մի քանի տասնեակ տարիներ է, ինչ հաստատվել են այդ գիւղում, նոյնութեամբ պահպանել են իրանց պապենական սովորութիւններն ու աւանդութիւնները և ոչ մի բանով չեն զանազանվում իրանց նախկին հայրենակիցներից, որոնք բաւական մեծ թիւով գտնվում են այսօր էլ այդ կողմերում։ Մուտք գործելով նրանց մէջ՝ դուք իսկոյն կը յիշէք Տրապիզոնի լեռնային գիւղերը, ուր մարդիկ ապրում են ողորմելի որջերում։ Գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ դառն քրտինք թափելով հանդերձ, ընտանիքի բոլոր անդամներով, նրանք հազիւ հաց կարողանում են մի կտոր ցամաք «լազուտ» հաց մատակարարել իրանց ընտանիքներին։ Եւ այդ շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք հաստատվել են բարձրաբերձ սարերի լանջերի վրա, որտեղ ապառաժների խոռոչներում տեղ տեղ միայն հանդիպում էք հողային շերտերի, որոնք և կազմում են նրանց բացառիկ վարելահողերը։ Աշխատանքի պայմաններն էլ շատ չեն տարբերվում ապառաժների ու ժայռերի անմատչելիութիւնից։ Այստեղ ամեն ինչ կատարվում է բացառապէս մարդկային բազուկների միջոցով։

Աւելացնելով դրա վրա և՝ այն բացասական առանձնայատկութիւնները, որոնցով յայտնի են ճանիկցիք ու համշէնցիք՝ դուք կը ստանաք ծեպելդացիների կեանքի նկարագիրը։ Մանրամասնութիւններից խուսափելու համար ես մատնացոյց եմ լինում միայն քսութեան, չար նախանձի վրա, որոնք հրաշքներ են գործում այդ արարածների մէջ։ Այստեղ չէք գտնի դուք 2 ընտանիք, որ հաշտ աչքով նայէին միմեանց և չունենային իրանց մէջ որ և է դալմաղալ... Արդէն լաւ տպաւորութիւն չի թողնի այդ գիւղը ոչ ոքի վրա։

Միւս կողմից առաջ է եկել և՝ մի այնպիսի նորութիւն, որը գնալով սուր կերպարանք է ստանում և կարող է տեղի տալ լուրջ անախորժութիւնների։ Ահա այդ հետաքրքիր նորութիւնը։

Ծեպելդայի քահանաներից մէկը սիրահարվելով Օրդուցի մի հայ կնոջ վրա, ուզում է ամուսնանալ նրա հետ։ Պէտք է նկատել, որ քահանան տարիներ առաջ զրկվել է իր երիցակնոջից։ Նա տարիքն առած, ամուսնացած զաւակների տէր և նիհարակազմ մի մարդ է, ու այնուամենայնիւ վճռել է հրաժարվել քահանայական կոչումից և պսակվել։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, դա այնքան էլ սարսափելի բան չէ ըստ երևոյթին, բայց արի տես, որ Սուխումի շրջանի հայերը տալիս են այդ վճռին ահագին նշանակութիւն և տեղի տալիս մի շարք անախորժութիւնների։ Վերջիններս ամենից առաջ ի նկատի են ունենում տէր հօր ֆիզիկական կազմը և տարիքը (կարծեմ 50-ից անց է) և գտնում, որ նրան, լինի նա հոգևորական թէ աշխարհական, սաղ չիգայ կրկին ամուսնութիւն։ Միւս կողմից հասարակութիւնն արդարանում է և՝ նրանով, որ ժամանակին թոյլ են տուել տէր հօրը «կուխարկա» պահելու, գիտենալով որ նա էլ «տղամարդ» է, թէև քահանայ։ Հայ հասարակութիւնը չէ կարող մարսել և՝ այն վիրաւորական ակնարկները, որ ուղղում են տեղացի օտարազգիները տէր հօր հասցէին՝ «երէկվայ քահանան—վաղվան պարոնը» բառերով...

Ինձ պատահեցին շատ հայ գիւղացիներ, որոնք լրջօրէն ասում էին, թէ երբ քահանան կամուսնանայ, ես էլ իրաւունք կը համարեմ ինձ առնել երկրորդ, երրորդ կին...

Թռուցիկ ակնարկով յիշելով այստեղ այդ նորութիւնը՝ փակում եմ նամակս, բայց հաստատ հաւատացած եմ, որ մենք էլի առիթ կունենանք խօսելու այդ խնդրի մասին, երբ նա կանգնած կը լինի տարբեր հողի վրա։

Մ. Տ. Շեռտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Արդուին, փետրվարի 22-ին

«Մշակի» 27 համարում կարդացինք Արդուինի գործակալ Յովհաննէս քահանայ Եսայեանի նամակը, որով պարծանքով է յայտնում, թէ ինքը, իբրեւ գործակալ, չէ թոյլատրել 13 տարեկան եւ 12 օրեկան Յուդիտայի պսակը 27 տարեկան երիտասարդի հետ, ընդդէմ գտնելով եկեղեցական եւ քաղաքացիական օրէնքներին. իսկ Բաթումի քահանան այդ պսակը կատարել է։

Ճշմարտութիւնը սա է, որ իմ բացակայութեանս ժամանակ ծխականներիս հովանաւորը հայր գործակալը, երբ պսակվողի հայրը դիմում է թէ երբ է ներելի օրը, որ հարսանիք անեն որդին պսակելու, հայր գործակալը ուրիշների ներկայութեամբ հրամայում է պատրաստութիւն տեսնել եւ երեք օրից յետոյ դեկտեմբերի 18-ին բերին եկեղեցի, որ պսակէ, բայց յանկարծ խոստացած օրը ես յայտնվում եմ եւ յայտարարութիւն ներկայացնում, պսակի հրամանը խնդրելով։ Շփոթվեց, որովհետեւ պսակագրասից զրկվում էր, մերժեց թէ 13 տարեկան չէ կարելի պսակել, ոչ մի կերպ չը բարդհամեցնելով, միջնորդել կօնսիստորիային լուծում տալու հեռագրով։ Խորհրդապահ գործակալը՝ ստացաւ կօնսիստորիայից պսակելու իրաւունքը, բայց թագցրեց ինձանից. իսկ պսակվողների համբերութիւնները հատնելով կրկնապատիկ ծախքեր անելով՝ գնացին Բաթում եւ պսակվեցին։ Այդ պսակը կատարելով Բաթումի քահանան առանց մի ակնկալութեան, խոհեմութիւն գործեց, որ գայթակղված սրտերը դէպի հոգեւորականութիւն մեղմից ու խաղաղացրեց, միջոց չը տալով նրանց դիմել ծայրայեղութեան։ Հեգնել այդ քահանային «զարգացեալ» կոչումով, շատ անտեղի է։

Իզուր է մատնացոյց անում 1899 թ. յունվարի 1-ի իր կազմած կանոնադրութիւնը, որի ճիշդ կատարումն իր երեւակայութեան մէջ միայն գոյութիւն ունի, ի բաց առեալ ժողովրդի տնտեսական խնայողական պայմանները։ Բոլորովին անհիմն է, գործակալի եւ այն վկայութիւնը, թէ Յուդիտան «վտիտ եւ շատ թոյլ օրգանիզմի տէր աղջիկ է։

Մկրտիչ քահանայ Աստուածատրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր վիպական գրականութեան հայր Աբովեանի թոռը, պ. Կ. Աբովեան հաղորդում է, որ թէ և ինքը «Մշակ»-ի միջոցով երկու անգամ յայտարարել է, որ իր պապի ձեռագիրներից կամ նամակներից ունեցող անձերը բարեհաճեն ուղարկել իրան այդ ձեռագրերը եթէ ոչ հաւաքելու, գոնէ արտագրելու և վերադարձնելու տէրերին, բայց նրա յայտարարութիւնները մընացել են ապարդիւն—ոչ ոք ոչ մի ձեռագիր չէ ուղարկել, այն ինչ դրանք կան, գոյութիւն ունեն։ Պարոնի հաղորդած լուրը նորութիւն չէ մեր հասարակութեան համար։ Նոյն ձեով են վարվել և Ստ. Նազարեանի, և Նալբանդիանի ձեռագիրներն ունեցողները։ Այդ մարդիկը չեն հասկանում մեծ գրողների ձեռագրերի անգին նշանակութիւնը մեր անցեալի և մեր գրական ու հասարակական գործիչների բնաւորութիւնները պարզելու տեսակէտից։ Քանքարաթագոյց ծառայի նման տակերն են գընում նրանք հանրօգուտ թղթերը, վրան նըստում և ոչ իրանք են օգտվում, ոչ էլ ուրիշին թոյլ տալիս օգտվելու, հասարակութեան համար մի օգտակար գործ արտադրելու։

—

Պետերբուրգի մի խումբ նկարիչների մէջ միտք է յղացել անմահացնելու Վերեշչագինի յիշատակը որ և է ձեով։ Ենթադրվում է կայացնել մի հսկայական ցուցահանդէս հանդուցեալի նկարներից, գրական գործերից, նամակներից և առհասարակ նրան վերաբերող բոլոր իրերից։ Այդ ցուցահանդէսից ստացված եկամուտը, ինչպէս հաղորդում է «Русск. Слово» լրագիրը, պէտք է գործադրվի կամ հանդուցեալին արձան կանգնեցնելու կամ նրա անունով թոշակաւորներ պահելու համար։

—

Այն անձինք, որոնք կը ցանկան ձեռք բերել պատերազմական բեմի երկրորդ քարտէզը, որ լոյս տեսաւ «Մշակի» № 72-ի հետ միասին, պէտք է վճարեն հատին 5 կոպէկ։ Իսկ այն անձինք, որոնք կը ցանկան ստանալ թէ նախկին և թէ երկրորդ քարտէզները միասին, պէտք է վճարեն 12 կոպէկ։ Օտար տեղերից դիմողներին կուղարկվեն քարտէզները, եթէ կը պահանջվի մի անգամից ոչ պակաս քան տասն օրինակ։

—

Ապրիլի 5-ին, ինչպէս հաղորդում է «Корр. Bureao»-ն, սրտի պայթիւնից վախճանվել է Կ. Պոլսում հայ-կաթոլիկ համայնքի «Պատրիարք և Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ» Էմմանուէլեան արքեպիսկոպոսը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ արդէն Մոսկվայում, Օդեսսայում և այլ քաղաքներում սկսել են նուիրատուութիւններ հաւաքել հանգուցեալ փոխ ծովապետ Մակարովին արձան կանգնացնելու նպատակով։

—

Շաբաթ օրը, մարտի 10-ին Թիֆլիսի ձիաքարշի անանուն ընկերութիւնը հաղորդեց քաղաքային վարչութեանը, որ Միքայէլեան փողոցում արդէն սկսել է ձիաքարշի երկաթէ գծերը փոխել նոր, գոգաւոր գծերով, որ անհրաժեշտ է էլեքտրական քարշակի համար։ Այդ աշխատանքները կը տարածվեն եղած բոլոր գծերի վրա։ Ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ յոյս ունի սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսներին պատրաստել և գործադրութեան մտցնել Թիֆլիսում էլէքտրական քարշակ։ Ուրեմն՝ եթէ կարելի է հաւատալ անանուն ընկերութեան վարչութեանը, պէտք է յոյս ունենանք, որ վերջապէս Թիֆլիսը կազատվի ներկայ ձիաքարշ կոչված «գոմէշի սայլերից»։

—

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որ նշանակված էր, կիրակի ապրիլի 11-ին, չը կարողացաւ կայանալ անդամների սակաւութեան պատճառով։ Ժողովի չէին եկել նոյն իսկ վարչութեան մի քանի անդամներ։ Ժողովը նշանակվեց երկու շաբթից յետոյ, ապրիլի 25-ին։

—

Ինչպէս երևում է պետական բանկի նորերս լոյս ընծայած ապրիլի 1-ի հաշուեկշռից, չը նայելով հաշիւների մէջ մտած մի քանի բարելաւումներին, այնուամենայնիւ բանկը 20 միլիոն ռուբլու նոր թղթադրամ է բաց թողել։ Այդ թղթադրամները դեռ ևս շրջանառութեան մէջ չեն մտցված, այլ մնացել են բանկի դրամարկղում։ (Русск. Вѣд.)

—

Կանանց պաշտպան ռուսական ընկերութիւնը բաց է անում մասնաճիւղեր Օդեսսայում և Ժիտոմիրում։ Այդ մասնաճիւղերից առաջինը, Օդեսսայի բաժինը մեծ գործ ունի կատարելու. տարեկան հարիւրաւոր և հազարաւոր անմեղ հրէայ օրիորդներ ու կիներ զանազան ստոր ու ցած միջոցներով խաբվում և տարվում են Կ. Պոլիս, Սալոնիկ, Զմիւռնիա, Եգիպտոս և այլն և այնտեղ ծախվում տեղական անառակոցներին։ Ահա այդ խայտառակ առևտրի դէմ կուելը պէտք է կազմէ, ինչպէս ասում է «Нов.»-ի լրագիրը, Օդեսսայի մասնաճիւղի էական գործը։

—

«Южн. Край.» լրագրի ասելով՝ Խարկովի երդուեալ հաւատարմատարներից մէկը խնդրել է, որ իրան թոյլ տան օգնական վերցնել մի կնոջ, որն աւարտել է արտասահմանում իրաւաբանական ֆակուլտէտը։ Երդուեալ հաւատարմատարի խնդիրն առաջարկված է կառավարութեան հաստատութեանը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ներկայումս կատարվող դէպքերի ազդեցութեան տակ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի վարչութիւնն այժմ առանձին ուշադրութիւն է դարձնում նաւաշինական մասի վրա, ցանկալով աւելի ևս զօրացնել այդ մասնագիտութիւնը։ Ուսանողները պէտք է այսուհետև ամառները գնան Ռուսաստանում գոյութիւն ունեցող մեծ նաւաշինարանները՝ գործնական աշխատանքներ կատարելու համար։

—

Խորտակված «Պետրոպաւլովսկ» զրահակիրի վրա է եղել ընկղմելու ժամանակ և «Нов. Вр»-ի թղթակից նկարիչ Ն. Ի. Կրավչենկոն, որ նոյնպէս մեռել է։

—

Կազգուանից մեզ գրում են. «Տեղիս եկեղեցին ահա մի տարուց աւելի է, որ մնացել է միայն երկու քահանայով, որոնք յաճախ չեն կարողանում բաւարարութիւն տալ իրանց բազմաթիւ ծուխերի կրօնական պահանջներին։ Տուժում են ի հարկէ միայն աղքատ ծխականները։ Ծերունի տէր Յովհաննէսի մահից յետոյ ահա մի տարի է պէտք է զգացվում մի նոր, թարմ և կրթված քահանայի։ Տեղումս վերաբնակված բաւական թիւով վաճառական և արհեստաւոր դասը, որ աւելի լուրջ է վերաբերվում դէպի եկեղեցական և հասարակական հարցերը, այլ ևս չէ կարող բաւականանալ տեղական խաւար ու տգէտ տիրացուներով, որոնք ամեն օր զանազան մութ միջոցների են դիմում քահանայ լինելու համար։ Անհրաժեշտ է գոնէ մի նոր, խելքը գլխին, կրթված քահանայ մեր յետամնաց աւանի համար։

—

Նոյն տեղից հաղորդում են մեզ. մօտ օրերս նշանակված էր երէցփոխի ընտրութիւն։ Տեղացի 8—900 ծխականներից ժողովի էին եկել միայն 2-3 մարդ, մի քանի հոգի էլ վերաբնակներ կային, իսկ մնացածը դէսից-դէնից հաւաքված անձեր էին, որոնք և խանգարեցին ժողովը, թոյլ չը տուին նոր ու արդար երէցփոխի ընտրութիւն կատարելու։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ խնդրում են տպել հետեւալը. «Միքայէլ Նալբանդեանցի երկասիրութիւնները խմբագրող յանձնաժողովը՝ յայտարարելով ի գիտութիւն հայ հասարակութեան, որ մօտ օրերս տպագրութեան է յանձնելու իր ձեռքին եղած բոլոր նիւթերը՝ խնդրում է ուղարկել իրան Մ. Նալբանդեանցի նամակները, անտիպ ոտանաւորները և յատկապէս «Մինին խօսք, միւսին հարս» գրուածքը, որ յանձնաժողովս մինչև այժմ չէ կարողացել ձեռք բերել՝ հետեւեալ հասցէով՝ Нахичевань н/Д. Арм. дух. Семинарія, Архидіакону Г. Черекчіанцъ»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայ կաթոլիկ հոգեւորականութիւնը Կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարքական փոխանորդ Արփիարեան արքեպիսկոպոսից շրջաբերական ստացաւ, որը ցաւօք սրտի յայտնում է հայ կաթոլիկների պատրիարք Տ. Տ. Պողոս Էմմանուէլեանի մահը ապրիլի 6-ին, երեքշաբթի օրը»։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 4-ին հայոց ուսումնարանի դահլիճում տեղիս սիրողները նոյն ուսումնարանի օգտին ներկայացրին Խրիմի հայոց բարբառով թարգմանված Ելիզաբօվի «Ռուբլին տասը կոպէկ» չորս գործողութիւնով կոմեդիան։ Ժողովուրդը, ի նկատի ունենալով ներկայացման նպատակը, լցվել էր ուսումնարանի դահլիճում։ Ներկայացումը վերջացաւ շատ ուշ և չը թողեց տպաւորութիւն։ Անհրաժեշտ ենք համարում յիշատակել հետեւեալը. պ. ըէժիսորը թոյլ էր տուել բեմ դուրս գալ պ. Սաբ.-եան սիրողին

այնպիսի թերութիւններով, որ մենք զարմացած մնացինք, որովհետև պարոնը քաղաքումս յայտնի սիրոյի և բանիմաց բէժիսորի անուն ունի։ Լաւ էին իրանց դերերում օր. Մ. Շարովարովան, օր. Մ. Թօսունեանը և օր Օ. Դրագունեանը։ Տղամարդիկ, սակաւ բացառութեամբ, թոյլ էին իրանց դերերում։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցան պարեր»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Ռուսների փորձերը անցնել Եալու գետը։ Ի-Զժուից ստացված պաշտօնական տեղեկութիւնները Տօկիօում, ինչպէս հաղորդում է «Standard» թերթի Թոքիոյի թղթակիցը, ցոյց են տալիս, որ ռուսները մի քանի անաջող փորձեր են արել անցնել Եալուն։ Ինը ծպտեալ կօզակներ ափ իջան Իօնամպօիից հարաւ, բայց խկոյն ստիպվեցին նահանջել եապօնական հեծելազօրքի կրակի առաջ։ Եապօնացիները հաղթեցին նրանց «Կայման» թնդանօթաձիգ նաւի վրա, որ գտնվում էր Եալուի գետաբերանում։ Սակայն կօզակները կարողացան անցնել միւս ափը, բայց ունեցան մի սպանված և երկու վիրաւոր։ Գետը անցնելու մի այլ փորձի մասին ևս հաղորդում է «Daily Mail» թերթը։ Ռուս հետեակների մի փոքր խումբ անցաւ գետի ձախ ափը մարտի 31-ին, բայց հանդիպեց այդտեղ թշնամուն, որ յարձակվեց նրա վրա։ Ռուսները կորցրին 22 մարդ սպանված։ Լուրեր են պատում զանազան, աւելի մանր ընդհարումների մասին Եալու գետի երկու ափերի վրա։ Եալու հասած եապօնական առաջապահ գնդերից մէկը, մօտեցել է մինչև Պօմախուա գետը։ Եապօնացիները ամրութիւններ են կառուցանում Շահէձայի հանդէպ, և այդ ամրութիւնների վրա աշխատող զօրքերը կօրէական հագուստով են։ Սէուլից ստացված տեղեկութիւնների համաձայն, ռուսները սաստիկ ամրացրել են իրանց դիրքերը Կիւլէնչինի մօտ, Ի-Զժուի դէմ։ Ամրութեան նպաստում է քաղաքը շրջապատող պարիսպը։ Ռուսական զօրքի կազմը Անդունում 20,000-ից պակաս չեն համարում։ (Русь)

Վլադիվոստոկի պաշարման մասին։ «Berliner Tageblatt»-ի թղթակիցը Տօկիօից այն կարծիքն է յայտնում, թէ Վլադիվոստոկի պաշարումը միայն ժամանակի խնդիր է և եապօնացիների յարձակողական շարժումը կը կատարվի այն ճանապարհի վրա, որ Պօրտ-Արթուրից տանում է դէպի հիւսիս և Վլադիվոստոկից դէպի արևմուտք, այսինքն թէ այստեղ և թէ այնտեղ, երկաթուղու ուղղութեամբ։ Խարբինում նրանք կը միանան ուղիղ անկիւնով։ Նոյն իսկ պարտութիւնը ցամաքի վրա վճռողական նշանակութիւն չի ունենայ եապօնացիների համար, եթէ նրանց աջողվի գրաւել Պօրտ-Արթուրը և Վլադիվոստոկը։ Վերջինի վրա յարձակվելու և այդտեղ զօրք հանելու համար եապօնացիները լուրջ պատրաստութիւններ են տեսնում իրանց նաւահանգիստներից մէկում, բայց գրաքննութիւնը արգելում է այդ մասին խօսել։ Պատրաստութիւնները կարող են աւարտվել մի քանի ամսում։ (Р. Вѣд.)

Չինացիների բռնած դիրքը։ Չինաստանից երբեմն երբեմն ստացվող տեղեկութիւնները յուզիչ բնաւորութիւն են կրում։ Շատ կասկածելի է թվում չինացի առևտրականների մեկնումը Մօսկվայից։ Դեռ պատերազմից շատ առաջ եապօնացիների ագիտացիան լրագիրների, գործակալների և կաշառաւորութեան միջոցով տեսաւ իր գործը։ Թէև եապօնացիները դեռ նորերս յաղթեցին չինացիներին 1894 թ. կուլի մէջ, իսկ 1900-ին միանալով եւրօպական ընդհանուր արշաւանքին Պէկինի վրա, ամենից աւելի անինայ կոտորում և այրում էին ժողովուրդին՝ սակայն չինացիները կարծես արդէն հաշտվել են այդ վիրաւորանքների հետ և այժմ յամառութեամբ պատրաստ են եապօնացիների հետ միասին գնալ «ռուս սատանաների» դէմ։

Սկզբում չինական կառավարութիւնը իբր թէ մեր կողմն էր, բայց այն հանգամանքը, որ մենք Մուկդէնի նահանգում որոշած ժամանակամիջոցից աւելի մնացինք, փոխեց տրամադրութիւնը։ Փոխ-արքայ Իւան-Շի-կայի և Մա գեներալի ազդեցութիւնը նշանաւոր կերպով սաստկացաւ։ Դժուար է որոշել չինական այն զօրքերի ճշգրիտ թիւը, որոնք գտնվում են պատերազմի բեմին մօտ։ Հիւսիսային Չինաստանում ապրող օտարականները գեներալ Մաի զօրքի թիւը հաշվում են 35,000 հոգի, 130 եապօնացի օֆիցէրներով։ Բացի դրանից Իւան-Շիկայի անմիջական տրամադրութեան ներքոյ գտնվում են 50,000 հոգի, իսկ Մանջուրիայի երեք նահանգներում ցրված են 25,000 հոգի, որոնք պահվում են իբր ոստիկանական նպատակով, կարգապահութեան համար։

Չինացիները սակայն օգուտ չը քաղեցին պատերազմի սկզբից և չը միացան խկոյն եապօնացիների հետ և այդ արեցին գուցէ իրանց թուլութիւնը զգալով և երկիւղ կրելով, որ անմիջապէս և անօգուտ տեղը կը ջարդվեն։ Բայց դրա խոխարէն, չը նայելով որ Մանջուրիայում աւելի նշանաւոր թիով ռուսական զօրք կայ այժմ, քան պատերազմից առաջ, խունխուզ հրոսակների գործունէութիւնը ոչ միայն չը նուազեց, այլ աւելի յանդուգն դարձաւ։ Երբ կը սկսվեն ցամաքային լուրջ գործողութիւններ եապօնացիների դէմ, շատ կարելի է, որ չինական բոլոր զօրքերը կը դառնան խունխուզներ։ Ի հարկէ, այդ թշնամին դեռ այնքան լուրջ չէ, և գլխաւորը, ինչպէս ցոյց է տալիս անցեալը, շատ հեշտութեամբ է ենթարկվում սարսափի, ուստի անընդունակ կազմակերպված և յամառ պարտիզանական պատերազմի համար, բայց այնուամենայնիւ մենք պէտք է պատրաստ լինենք։ (Н. В.)։

Անգլիական ազատամիտ մամուլը եւ ռուս-եապօնական պատերազմը։ «Daily News» լրագիրը ուղարկել է ռուսաց Կայսրին հեռագիր հետևեալ բովանդակութեամբ. «Ի դժայ Լօնդօնի ժողովրդի «Daily News» լրագիրը արտայայտում է ռուսաց Կայսրին և ռուսաց ժողովրդին իր խորին համակրութիւնը նրանց հասած մեծ վշտի համար ներկայ զբաղդ պատերազմում»։ Ռուսաց դեսպան կոմս Բենկենդորֆ պատասխանեց հետևեալ խօսքերով. «Նորին Կայսերական Մեծութիւնը յանձնեց ինձ արտայայտել Նրա անունից երախտագիտական և անկեղծ շնորհակալութիւն այն համակրական հեռագրի համար, որ Նա ստացաւ «Պետրօպավլօվսկի» կորստեան առիթով։ (Т. А.)

Լօնդօնից գրում են «Русскія Вѣдомости» լրագրին. «Պետրօպավլօվսկի» կորուստը և ծովապետ Մակարովի մահը այստեղ խորին և անկեղծ ցաւակցութեան զգացմունքներ առաջ բերին։ Ամբողջ մամուլը, նոյն իսկ պահպանողական լրագիրները, որոնք ցուցաբար մեր կողմը չը բռնեցին այս պատերազմում, այսօր նուիրում են զգացված յօդուածներ սարսափելի աղէտին։ Օրինակ, «Times» լրագիրը, բացատրելով Մակարովի փառաւոր ձիրքերը և զարմանալի քաջութիւնը, ասում է. «Ազգայնական տեսակէտից՝ ծովապետի կորուստը ցաւալի է և գուցէ անփոխարինելի, բայց Մակարովը հանդիպեց մահին այնպէս, որ նրան կը նախանձէ ամեն մի քաջ ծովագնաց— երես առ երես թշնամու հետ, իր նաւի վրա, ծածանվող դրօշակի տակ։ «Daily News» գտնում է, որ Մակարովի մահը Ռուսաստանի համար աւելի ծանր հարուած է, քան մի քանի զրահաւորների կորուստը։ Վերջինները կարելի է փոխարինել, մինչ այնպիսի մարդկանց, ինչպէս Մակարովն է, դժուար է գտնել։ Ռուսաստանի հետ միասին լրագիրը ողբում է այնքան երիտասարդ և քաջարի կեանքերի մահը և իր յօդուածը վերջացնում է անգլիական ազգին ուղղած մի գիմումով։ Լրագիրը ապացուցանում է, թէ անգլիացիները ինչպէս և վերաբերվեն Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականութեան, նրանք չը պէտք է թշնամաբար վերաբերվեն ռուսաց ժողովրդին, ուստի ներկայ պատերազմում բրիտանական դէմօկրատիայի բոլոր համակրութիւնները չեն կարող լինել եապօնացիների կողմը։ Այդ կողմից «Daily News» լրագիրը միւս արմատական թերթերի ուղղութեան է հետևում, որոնք վերջին ժամանակներս Ռուսաստանի կողմն են բռնել, որոշ վերապահումներով։ «R. Newspoper» օրինակ, ցոյց է տալիս իր ընթերցողներին ռուսական գրականութիւնը, որը ծաղկել է այնպէս շքեղ, չը նայելով անընպատ պայմաններին։ Ով, ասում է նա, կուսումասիրէ այդ գրականութիւնը, նա, առանց տատանվելու, կանցնի ռուսների կողմը այս պատերազմում։

Սակայն միւս կողմից Լօնդօնում հրատարակվող, անգլիերէն և եապօներէն լեզուով, «Toqe» թերթի մէջ առաջ է բերված եապօնական վերին պարլամենտի նախագահ իշխան Կօնոյի հետևեալ խօսքերը. «Մենք ասիացիներ ենք, բայց մենք դարձրել ենք մեր կայսրութիւնը առաջնորդ և հրեղէն տառերով գրել ենք մեր դրօշակի վրա «քաղաքակրթութիւն» բառը։ Չինաստանը, Կօրէան, հնդկական երկիրները—ամենքը այժմ նայում են Եապօնիայի վրա, իբրև ասիական իշխանութեան և ազգայնական վերածնութեան ժամանակակից իրականացնողի վրա։ Ասիական բոլոր երկիրները սպասում են օգնութիւն Եապօնիայից և մենք, եապօնացիներս, համոզված ենք, որ պէտք է տանք այդ օգնութիւնը։ Մեր պարտաւորութիւնն է բարձրացնել ասիական լուսաւորութեան մակերևոյթը և ապացուցանել ամբողջ աշխարհին, թէ վճռողապէս ամեն բանի մէջ Արևելքը ստոր չէ Արևմուտքից»։

Այդ բոլորը շատ լաւ կը լինէր, ասում է լրագիրը, եթէ Արևելքի վերածնութեան ձգտումը հետևանք չը լինէր իմպերիալիզմի և միլիտարիզմի, որ ամեն տեղ սոսկալի աղքատութեան մէջ է պահում ժողովուրդը։ (Р. В.)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 10-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան այցելեցին Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչին և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնային Մեծ Իշխանի ծննդեան օրվայ առիթով։

ՈՒՖԱ։ Ապրիլի լոյս 10-ի գիշերը Իվանովսկում, իշխան Բէլօսէլսկի-Բէլօզէրսկիի բէյսերի գործարանում տեղի ունեցաւ հրդեհ, որը լափեց մինչև կէս միլիոն ռուբլու գումարի շինութիւնը և մեքենաները։

ՊԵՏՐՕՊԱՎԼՕՎՍԿ։ Անցաւ դէպի Արևելք հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ապրիլի 10-ին «Վարեագ» և «Կօրէեց» նաւերի օֆիցէրները և ծառայողները ճանապարհ ընկան Պետերբուրգ։ Ճանապարհ գցելը շատ ջերմ և սրտագին բնաւորութիւն ունէր։

ՊԱՐԻԶ։ Լուրէ, Դէլկասէի ուղեկցութեամբ, ճանապարհ ընկաւ Իտալիա։

ՎԻԵՆՆԱ։ Ուէլսի պրինցը և պրինցուհին մեկնեցին։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ («Բէյտ. գործ.»)։ Ստորագրված և յանձնված է պայմանագրվող կողմերին այն դաշնագիրը, որով Պանամեան ջրանցքի սեփականութեան իրաւունքը անցնում է Միացեալ-Նահանգներին։

ՍՕՈՒՏՀԷՄՏՕՆ։ («Բէյտ. գործ.»)։ Որովհետև ոստիկանութիւնը աննշան յանցանքների համար կալանաւորեց մի քանի զինուորների, վերջինների ընկերները գիշերը անկարգութիւններ կատարեցին, հեռացան զօրանոցներից, ջարդեցին ոստիկանատան պատուհանները և ֆնասներ պատճառեցին քաղաքում։ Ոստիկանութեան հետ ընդհարման ժամանակ մի քանի զինուորներ վիրաւորված են։ Անկարգութիւններ սկսողները կալանաւորված են։

Կ. ՊՕԼԻՍ։ Հակառակ նախկին հաղորդած տեղեկութեան, Ռուսաստանը չէ շտապեցնում, որ վճարվի իրան պատերազմական տուգանքի պարտքը։ 125,000 լիրայի մերձակայ վճարման պայմանաժամը կը լրանայ յուլիսի վերջին։ Ընդհակառակը, ֆնասների համար վարձատրութիւն տալու հին պահանջները տոկոսներով միասին նախկին ապառիկներից նորից լուրջ կերպով առաջադրվում են։ Դաշնադիր պետութիւնների դեսպանները այսօր պնդում են, որ ֆինանսական կողմից լուծվի մակեդոնական ժանդարմերիայի հարցը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Խարկովի դատաստանական պալատի առանձին ատեանում սկսվեց տեղական առևտրական բանկում տեղի ունեցած զեղծումների գործի քննութիւնը։ Ինչպէս յայտնի է, զեղծումների պատճառով մնանկացաւ վերոյիշեալ բանկը։

ՄՕՍԿՎԱ։ Նահանգական զէմստվօական հարկի է ենթարկում բոլոր բնակեցրված շինութիւնները անյապաղ օգնութիւն հասցնելու համար սպանված զինուորականների ընտանիքներին։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական կայսրը ափ իջաւ Վենեցիայում։ Կօրէից ստացված տեղեկութիւնների համեմատ, ռուսները Սիօն-Զժիօնից շարժվեցին դէպի Պուկ-Զիօն և գրաւեցին այդ տեղը։ Այդտեղ գործող ռուսական զօրաբաժինը, թիով մօտ 5000 մարդ, նպատակ ունի անհանգստացնել եապօնացիներին ետևից, այն ինչ ռուսական աւելի նշանաւոր պատերազմական ոյժեր մտնում են արևմտեան Կօրէա Եալուի գետաբերանի մօտ։

ՏՕԿԻՕ։ Հաղորդում են, որ ռուսները ամրացրին Ուիխան կղզին, որ գտնվում է Եալուի մէջ տեղում, ականներ դրին գետի մէջ։

ՍԷՈՒԼ։ Եալուի վրա աւելի նշանաւոր ընդհարման մասին այստեղ պատող լուրերը դեռ կարօտ են հաստատման։ Կարծվում է, որ անդադար տեղի ունին ընդհարումներ, և բացի դրանից ոչինչ յայտնի չէ։ Յարձակումը ճակատից այստեղ այնուամենայնիւ հնարաւոր է համարվում։ Գէնզանից այստեղ եկած յատուկ սուրհանդակը հաղորդում է, որ ռուսները Սին-Զժիօնում այրեցին եապօնական հիւպատոսարանը և կօրէական մաքսատունը։ Հեռագրական գրասենեակը հրացանաձգութեան ենթարկվեց։ Կարծում են, որ ռուսները յետ քաշվեցին դէպի հիւսիս, և որ Կօրէայի արևելեան ծովափի մօտ եապօնական էսկադրայի ներկայութիւնը սաստիկ խանգարում է այդ տեսակ ձեռնարկութիւններին։

ՍՕՖԻԱ։ (Դիմադրական շրջաններից)։ Կ. Պօլսի բոլգարական դիպլօմատիական գործակալութեան քարտուղարը, Սօֆիայից ուղևորվելով իր պաշտօնատեղին, ստիպված էր իր չէմօդանները թողնել Ադրիանօպօլսում, որովհետև թիւրքաց իշխանութիւնները կամենում էին քննել դրանց։ Բ. Դրան առաջ եռանդուն առաջադրութիւնից յետոյ, չէմօդանները ուղարկվեցին Կ. Պօլսի բոլգարական գործակալութիւնը չը բացված։ Իշխանութիւնները նեղողութիւն խնդրեցին։ Միջնադէպը վերջացած է, բայց նա այստեղ մեծ դժգոհութիւն յարուցեց՝ ի նկատի ունենալով թիւրք-բոլգարական համաձայնութիւնը, որ շուտով մոռացան թիւրքերը։ Ներումն շնորհված բոլգարներին ազատութիւնը հիանալի տպաւորութիւն գործեց ազգաբնակութեան վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են հրովարտակներ՝ 1) օֆիցէրական ծառայութեան յիսնամեակի առիթով յանուն գվարդիայի զօրքերի և Պետերբուրգի զինուորական շրջանի գլխաւոր հրամանատար Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի, շնորհելով նրան կրծքի վրա կրելու Նիկոլայ I, Ալէքսանդր II, Ալէքսանդր III և Նիկոլայ II կայսրների ադամանդազարդ պատկերները. 2) գեներալի աստիճանով յիսնամեայ ծառայութեան համար յանուն գեներալ-ֆէլդմարշալ կոմս Միլիւտինի, շնորհելով նրան կրծքի վրա կրելու համար Նիկոլայ I և Նիկոլայ II կայսրների ադամանդազարդ պատկերները։

Նիկոլաեվսկի ընդհանուր շտաբի ակադէմիայի գեներալ լէյտենանտ Գլազով նշանակված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ։

Բարձրագոյն բարեհաճութեամբ Հեռաւոր Արևելքի փոխարքան հետևեալ յայտարարութիւնն է արել. «Եթէ կվանտունեան ափերի մօտ կամ ռուսական ծովային ոյժերի գործողութիւնների շրջանում կը բռնվեն չէզոք շոգենաւեր այնպիսի թղթակցութիւններով, որոնք դեռ պայմանագիրներով չը նախատեսված կատարելագործված գործիքների միջոցով տեղեկութիւններ են հաղորդում թշնամուն, այդպիսի թղթակիցները կը համարվեն լրտեսներ, իսկ անթել հեռագիրներ ունեցող շոգենաւերը կը բռնվեն որպէս պատերազմական պրիզներ։» Վերոյիշեալ յայտարարութիւնը շրջաբերաբար հաղորդված է արտասահմանեան ռուսաց ներկայացուցիչներին, հրամանագրերով նրանց տեղեկացնել այդ բանը այն կառավարութիւններին, ուր իրանք գտնվում են պաշտօնով։

ԲՈՒՐԻ. Այստեղ ժամանեց գերմանական կայսրը։

ՇՏՈՒՏԳԱՐՏ։ Այստեղ ժամանեցին Ուէլսի պրինցը և պրինցուհին։

ԲԻԼԳՐԱԴ։ Թագաւորը հրաժեշտի ունկընդրութեան ընդունեց պալատական ծառայութիւնը թողնող օֆիցէրներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Прав. Вѣстникъ»-ում տպագրված է ֆինանսների մինիստրի մի ընդարձակ հաղորդագրութիւնը Հեռաւոր Արևելքում մեր զօրքերի տեղափոխութեան համար եղած վճարման միջոցների մասին. ամենալաւ վճարման միջոցը համարվում է թղթադրամը, որին վարժվել է ազգաբնակութիւնը 1900 թ-ից։ Որպէս զի կուրսը չը տատանվի, մինիստրութիւնն այժմ հոգ է տարել անյապաղ լրացնելու Հեռաւոր Արևելքում եղած թղթադրամի արծաթի վերածելու ֆոնդը կայսրութեան մէջ եղած ձոյլ արծաթի պաշարով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ ապրիլի 9-ին Եալուի ափերում ամեն ինչ բարեյաջող էր։ Ապրիլի 8-ին եապօնացիների հետ հրացանաձգութիւնը կատարվում էր մօտիկից, որովհետև մեր մակոյկները կօրէական ափի մօտ նստեցին աւազի վրա։ Թշնամու մի մեծ մակոյկ ընկղմվեց իր վրայի մարդկանցով մեր երկու թնդանօթների կրակից։ Այդ մեծ մակոյկը՝ ի թիւս միւսների՝ դուրս եկաւ Պօմախուա գետից մեր նաւակների նահանջը խանգարելու համար։ Վիրաւորված շտաբս-կապիտան Զմեիցինը մեռաւ։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Ապրիլի 19-ին (Սեպ. թղթակցից)։ Ապրիլի 9-ին, ժամը 3-ի մօտերը հորիզոնի վրա երևաց մի սպիտակ նաւ, որ բռնել էր Պօրտ-Արթուրի ուղղութիւնը։ Ակամայնաւեր ուղարկվեցան զննելու, որից յետոյ նրան բաց թողին։ Մանրամասնութիւնները կը պարզվեն։

ՍԱՐԱՏՕՎ։ Վոլգան այստեղ բոլորովին մաքրվեց սառոյցից, աւելի վերև գետը ծածկված է։

ԲԱԹՈՒՄ։ Բաչինսկի անտառապետը զեկուցեց, որ Քութայիսի նահանգի Բաչինսկի գաւառի պետական հողի վրա գտնվել է նաւթի հանք։

ԲԵՐԼԻՆ։ Շանգհայից հաղորդված լուրի համաձայն, Պօրտ-Արթուրի վերջին ճակատամարտին մասնակցող եապօնական պատերազմական 3 նաւեր անցեալ երեքշաբթի Սասէբօ եկան. նրանք բոլորն էլ խիստ վնասված են։

12 ապրիլի

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ «Մօրնինգ Պոստի» տեղեկութիւնը այն մասին, որ եապօնացիներն անցել են Եալու գետը, բոլորովին անհիմն է։ Գենեռալ մայիօր Ֆլուգ»։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Ապրիլի 11-ին (Սեպ. թղթ.)։ Ապրիլի 9-ին Պօրտ-Արթուրի դիմացը բռնվեց մի նաւ. երևաց, որ նա «Դէյլի Նիւսի» թղթակիցներից վարձված է։ Նոգենաւը պահապան նաւերով խիստ ծովը հանվեց։ Պօրտ-Արթուրի շրջանում ամեն ինչ հանգիստ է։

ՀՌՕՄ։ Նախագահ Լուբէն Հռոմ հասաւ. նրան դիմաւորեցին թագաւորը, Տուրինի կոմսը և Գէնուայի հէրցոգը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Այսօր մայր եկեղեցում, ժողովրդի լի բազմութեան ներկայութեամբ, յօդուտ նաւատորմի հզօրացման, տրվեց մի փայլուն համերգ, որ կազմակերպել է փոխծովապետ Սկրիդլովի ամուսինը, ինքն էլ անձամբ մասնակցելով։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Պօրտ-Արթուրը զարմացնում է իր հանդարտութեամբ։—Մակարովի և «Պետրոպաւլովսկ» զրահակրի ամբողջ շտաբով ոչնչանալը ամենևին չէ խախտել Պօրտ-Արթուրի անմատչելիութեան վրա ընդհանրութեան ունեցած կարծիքը։ Վերջին երկու ամիսների ընթացքում նա զրված է այնպիսի փայլուն պաշտպանողական դրութեան մէջ, որ դարձել է բոլորովին անմատչելի թէ ծովի և թէ ցամաքի կողմից։ Բոլոր թոյլ կէտերը զինաւորված են։ Բերդապահների թիւը հասցրած է ամենարձր թիւն։ Բերդը մթերքներով և ռազմամթերքներով ապահովեցրած է աւելի քան մի տարի ժամանակի համար։ Յերեկով Պօրտ-Արթուրը ոչնչով չէ նմանում պաշարված քաղաքի. բուլվարում ածում է մուզիկան, ժողովուրդն զբօսնում է և երեխաները խաղում են. խանութները և բեստորանները առաջվայ նման առատուր են անում. գիշերը խոր մթութիւն է տիրում, և ցոլացուցիչներով լուսաւորված նաւակայանը յիշեցնում է պատերազմական դրութեան մասին։ Չը նայելով եապօնական էսկադրայի բոլոր յարձակումներին, ոչ քաղաքին, ոչ էլ բերդին ոչ մի վնաս չէ հասել, քանդվել են միայն մի քանի չինական խրճիթներ։ Պօրտ-Արթուրի մուտքը բոլորովին ազատ է։ Նկատված է, որ եապօնացիները յարձակումներ են գործում ամեն երկու շաբաթը մի անգամ և նրանց եբեալուն առաջընթացներ են հանդիսանում չինացիների նախագուշակութիւնները, որոնք տեղեկութիւններ են ստանում եապօնացիներից. բացի դրանից՝ երևում են և շոգենաւեր անգլիական թղթակիցներով։ Ամեն մի նոր ռմբակոծութեան ժամանակ եապօնացիներն աւելի անվճռաբար են յարձակում հրազէններ և կանգնում են մեր մարտակոցների կրակի շրջանից դուրս։ Վերջին ռմբակոծութեան ժամանակ, ապրիլի 2-ին «Նիսսինը» կամ «Կասուգան» լուրջ վնասներ կրեց։ Եապօնացիները յամառաբար թագցնում են իրանց կորուստները։ Վերջին տեղեկութիւններին նայելով՝ Եապօնիան պատերազմի համար լարում է իր վերջին ոյժերը։ Նրա դրամական միջոցները սպառվելու վրա են, այն ինչ Ռուսաստանը դեռ չէ սկսել յարձակողական գործողութիւններ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում է՝ սակաւաթիւ
Լ.—ՄԱՆ.
ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
Գինն է 15 կ.
Դիմել «Գուտտէնբէրգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներին։ (Հ. Կ. Ե. Հ. Շ.) 5—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—նեբքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825. (Հ. Ե. Հ. Հ.) 19—105

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ
(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում։
—

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։
—
Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 19) 3—20

Ճաղատները թող ուշադրութիւն դարձնեն

Մենք հաղորդեցինք մեր ընթերցողներին Պարիզի բժիշկ Լէօն Ֆուրնիօլի գիտական գիւտի մասին։

Ինչպէս յայտնի է, գործը վերաբերում էր մազերը թափվելու դէպքերի մեծ մասին։ Մեզ մնում է կատարել մի հաճելի պարտականութիւն—շնորհակալութիւն յայտնել մեր բազմաթիւ ընթերցողներին, որ դիմել են նրան, և որոնց հաւատը վարձատրվել է արագ բարեբաղդութեամբ։

Իսկապէս, հազիւ մի ամիս գործադրելով, մազերի թափում ունեցող անձերը կարողացան արդէն գնահատել նրա գտած միջոցի բարերար ազդեցութիւնը։ Մի սրուակը դադարեցրեց մազերի ամենաարագ թափումը և ոչնչացրեց թեփը, որ անտանելի քոր էր պատճառում։ Մի խօսքով, բաւական էր մի սրուակ, որ արգելվեր ճաղատութիւնը։ Այդ տկարութիւնը լուրջ կերպարանք կը ստանայ, եթէ ժամանակին առաջը չառնվի։

Ինչ վերաբերում է արդէն ճաղատներին, որոնք սկսել են օգտվել ակնարկված միջոցից, չէ կարելի սպասել մազերի լիակատար վերարտադրութիւն 4 շաբաթվայ բժշկութիւնով. բայց գոնէ նրանք բոլորն էլ բժշկվելու ճանապարհի վրա են։

Պէտք է դիմել անմիջական հասցէով նրա գրքոյկը և դեղն ստանալու համար. Docteur Léon Fournol, 17, rue de Châteaudun, Paris, Парижъ.

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են՝
«Երգեցողութիւնը սրբոյ պատարագի» փոխադրեալ ի խաղս եւրոպականս և նեղաշնակեալ ի ձեռն Մ. Եկմալեան գ. 10 ր.
«Ներդաշնակեալ երգեցողութիւնք» սրբոյ պատարագի արական խոնարհ ձայն (basso) աշխատութիւն Նոյնի, 3 ր.
«Ներդաշնակեալ երգեցողութիւնք» սրբոյ պատարագի արական բարձր ձայն (tenore) աշխ. Նոյնի, 3 ր.
«Ներդաշնակեալ երգեցողութիւնք» սրբոյ պատարագի իգական բարձր ձայն (soprano), աշխ. Նոյնի, 2 ր.
«Ներդաշնակեալ երգեցողութիւնք» սրբոյ պատարագի իգական խոնարհ ձայն (alto), աշխ. Նոյնի, 2 ր.
Նոր լոյս տեսաւ, ժողովածու Շիրվանզադէի, գ. հատոր, 1 ր. 50 կ.
Նոյնի ժողովածուի ա. ևեր. հատորները արժեն 3 ր. Բաժանորդագրութեամբ 4 հատ. 4 ր.—50 կ.
Բաժանորդագրութիւն Դաղբաշեանի Հայ-ռուսերէն բառարանի, 4 ր.
Նոյնի, Ռուս-հայերէնի բառարանի, 7 ր.
«Արծաթ մանէթի պատմութիւնը», մանկական զրոյց, Գ. Շահբուդաղեանի, 15 կ.
Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ» Дворцовая, Г. Галустяну. 2—3

Լոյս տեսաւ երդուեալ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
«ПРАКТИЧЕСКОЕ РУКОВОДСТВО
для составленія бумагъ по дѣламъ Гражданданскаго Судопроизводства въ Закавказскомъ Краѣ».
Գինն է 1 բուբլի։
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական, Խիղդէկելի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողները՝ (прис. повѣр. С. С. Меликъ-Адамову. Тифлисъ, Межевая ул., д. № 40), 10 օրինակից աւելի պահանջով՝ ստանում են 10% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ (Ե. Հ. Շ.) 9—10

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ
ծննդեան հարիւրամեակի առթիւ լոյս են տեսել բաց նամակներ.
ա. Խ. Աբովեան եւ Ֆ. Պարros.
բ. Խ. Աբով. եւ իր տունը։
Իրաւունքը վերապահված է և միայն մեզանից կարելի է ստանալ։ Զոյգը 15 կ. գուժաբով գնողներին զիջումն։
Այրի Կ. Աբովեան, Թիֆլիս, Անտոնեան փողոց, № 23. 1—1

Լոյս տեսաւ
Հ. ՋԱՄԲԱԶԵԱՆԻ
«ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ»
Ա. եւ Բ. զրքոյկները
ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ
պատմուածքներ
Ա. Գորկիի կենսագրութիւնը պատկերով։ Ընթերցող։ Տափաստանում։ Ջանձրոյթից։
Գինը 20 կոպ.
Բ. Մի անգամ աշնանը։ Խանը և իր որդին։ Ընկերներ։
Գինը 10 կոպէկ։
Դիմել գրավաճառներին։ 2—3

Լոյս տեսաւ
«Գուտտենբերգ» գրախանութի հայերեն եւ ռուսերեն ընդարձակ գրացուցակը եւ ցանկացողներին ուղարկվում է
ՁՐԻ

Լոյս տեսաւ
Յարութիւն Թումանեանցի
ՄՈՒՍԱ
երկրորդ նուագ
Գինը 20 կոպէկ։
Մուսա, առաջին նուագ, գինը՝ 20 կոպ.
Հասցէ՝ Тифлисъ, Чавчавадзевская, № 25 а, Арутюну Туманянцу. (Հ. Ե. Հ.) 2—3

Լոյս տեսաւ
ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
Առաջին տարի
չորրորդ տպագրութեամբ
Դիմել հեղինակին և գրավաճառներին 2—5

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
գրողների, գիտնականների, պատմական գործիչների, գիտութիւնների, գրականութիւնների և երկիրների—համաշխարհային և կովկասեան ու հայկական՝
(Մոտ 1000 էջ եւ մոտ 350 պատկերներով)
խմբագրութեամբ և հրատարակութեամբ և «Հանրաստէլի Գրադարանի» հրատարակիչ Հ. Առաքելեանի, նմանողութեամբ Պավլենկովի «Энциклопедическій Словарь» և Ֆրանսերէն Dictionnaire—Manuel Illustré des Ecrivains et des Littératures» հրատարակութիւնների։
Հանրագիտական պատկերազարդ բառարանը կարևոր օժանդակ և օգտակար տեղեկատու կը լինի ամեն մի ինտելիգենտ և ինքնակրթութեամբ զբաղվող անձի համար։ Բացված է բաժանորդագրութիւն. գինն է միայն բառարանի լոյս տեսնելը—4 ր., լոյս տեսնելուց յետոյ 5 ր., կազմով,—որ կը լինի շքեղ և գեղանկար—1 բուբլի աւելի։ Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 50 կ., իսկ կազմածների համար 70 կ.։ Կարելի է վճարել մաս-մաս—2 ր., և յետոյ 2 ր. 50 կ.։ Պէտք է դիմել բացառապէս՝ կազմող—հրատարակիչ Հ. Առաքելեանցին այս հասցէով. Թիֆլիս, խմբ. «Մշակ»-ի, Тифлисъ. Редакція «Мшакъ».
Որովհետև Հանրագիտական Բառարանի տպագրութեան ծախքը մեծ է, ուստի քիչ քանակութեամբ է տպվելու, այդ պատճառով ցանկալի էր, որ ստորագրողները շտապէին մինչև մայիս ամիսը յայտնել։

ՄԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
„ՆԱԳԵՓԴԱ“
Ընկերութեան Թիֆլիսի գործակալութիւնը պատիւ ունի յայտարարել ի գիտութիւն հասարակութեան, որ ընկերութեան ապրանքների գլխաւոր պահեստը Թիֆլիսում, որը գտնվում էր Կաթոլիկական փողոցում, Զուբալովի տանը, ներկայ ապրիլ ամսի 11-ից տեղափոխվում է Մանթաշեանի շինութեան մէջ, Հայոց փողոցի վրա։ Մուտքը Էկզարշէսկի փողոցից, արևելեան հեռաւորաց զպրոցի հանդէպ։
Ապրանքների ընդունելութիւնը և յանձնելը տեղի ունի ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը և երեկոյեան 5—8.
Տելէֆոն պահեստի № 370. տելէֆոն գրասենեակի № 108. (Կ. Ե. Հ. Ո. Կ.) 5—5

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ընկերութեան ԳՐԱՄՄՕՖՕՆ Ռուսաստանում
Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպէկտ, Երիտանցի տուն № 7.
Հասցէն հեռագրով Թիֆլիս
ԳՐԱՄՄՕԿՕՄՊԱՆԻԱ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենակատարելագործված սալոնական և կոնցերտային գրամմօֆոններ։

Մեծ քանակութեամբ՝ անշշուկ պլատինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, բրական, պարսկական, տաճկական, լեհական, Ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշները։
ՊԼԱՏԻՆԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ խնդրում ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆաբրիկայի գրօշմին «ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ» առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս կեղծված։
Պահեստում կայ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի է նորոգել փչացած ապարատները։ Գրամաֆոնի ուղիղ բանելու համար տրվում է ելբաշխաւորական թերթ 3 տարի ժամանակով։
Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախսը գնողների հաշուին։
ՈՒՂԱՐԿԵԼԸ ապարատների երկաթուղու բոլոր կայարանները, եւրոպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է պահեստի հաշուին։
Պօստով ուղարկած ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշուին կէսը։
Ամեն պլատինկաները միայն մեր բաց թողած դրշմով «Գրող-հրեշտակ» յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով.

Փոքր սովորական » էկստրայ	հատը — 50 կոպ.	Մեծ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 00 կոպ.
Գիգանտ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 30 կոպ.	Տամանիս	» 1 » — »

Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8½ առաւ. մինչև ժամի 9-ը երեկոյեան։
Պահանջեցէք պատկերազարդ պրէյսկուրանտներ։
Գումարով գնողներին ուղարկվում է Օպէօվի պրէյսկուրանտները պահանջելուն պէս։—Պահանջեցէք լիակատար լիբրետտօ գրամմօֆոնի համար, գինը 1 ր. 50 կ.։ 29—50

Дозволено Цензурою. Тифлисъ, 12-го апрѣля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянцъ, Мих. пр. № 81.